ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 504 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 17-Ի N 973-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերը և 34-րդ հոդվածի 1-ին մասը՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հուլիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կանոնադրությունը հաստատելու մասին» N 973-Լ որոշմամբ հաստատված հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) հավելվածի 12-րդ կետում՝

ա. 23-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«23) կազմում և քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների թեստերում ընդգրկվող «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրենսդրական ակտերից մասնագիտական գիտելիքները ստուգող թեստային առաջադրանքները.»,

բ. 24-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«24) կազմում և քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է գլխավոր քարտուղարի մրցույթների թեստերում ընդգրկվող «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով և 10-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետով սահմանված օրենսդրական ակտերից մասնագիտական գիտելիքները ստուգող թեստային առաջադրանքներ.»,

գ. 30-րդ ենթակետը «կոմպետենցիաների» բառից հետո լրացնել «, ինչպես նաև աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների համանման (նույնաբովանդակ) գործառույթներից բխող մասնագիտական գիտելիքների» բառերով,

դ. 31-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունիսի 23-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.06.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ